

ՀԱԿՈՐ ԱՎԶՅԱՆ
ԵՊՀ

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՒ ԹԱԼԻՇԵՐԵՆԻ
ՁԵՒԱՐԱՆԱԿԱՆ ՄԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ
(թալիշերենի Անքարանի բարբառի նյութի հիման վրա)

Իրանական լեզուների հյուսիսարեւմտյան խմբի մեջ մտնող թալիշերենը հնչյունաբանական, ձեւաբանական ու բառապաշարային մի շարք հատկանիշների հիման վրա ավանդաբար բաժանվում է երեք բարբառախմբի՝ հյուսիսային, կենտրոնական եւ հարավային: Այս լեզվի ուսումնասիրության պատմության սկիզբը կապվում է լեհ բանաստեղծ, սլավոնագետ եւ իրանագետ Ա. Խոձկոյի անվան հետ. Լոնդոնում 1842 թ. լույս է տեսնում նրա “Specimens of the popular poetry of Persia” աշխատությունը, որտեղ հեղինակը նախ համառոտ կերպով անդրադառնում է թալիշերի ծագմանը եւ կենսակերպին, ապա ներկայացնում է իր կողմից հավաքած թալիշական 15 երգ՝ իրենց թարգմանություններով¹: Հետագայում թալիշերենի ուսումնասիրությամբ են զբաղվում նաեւ ռուս արեւելագետներ Ի. Բերեզինը, Բ. Դորնը, լեզվաբան Պ. Ռիսսը, իրանցի լեզվաբան Է. Յարշաթերը, ֆրանսիացի իրանագետ եւ լեզվաբան Ժ. Լազարը, գերմանացի իրանագետ Վ. Գայգերը, Վ. Սոկոլովան եւ այլք: Այնուամենայնիվ, թալիշերենի ուսումնասիրության պատմության մեջ բեկումնային են դառնում ռուս հայտնի արեւելագետ Բ. Միլլերի աշխատանքները. 1930 թ. լույս է տեսնում հեղինակի «Թալիշական տեքստեր» (Талышские тексты) աշխատանքը, իսկ 1953 թ. բազում տարիների տքնաջան աշխատանքից հետո հրատարակվում է Բ. Միլլերի «Թալիշերեն» (Талышский язык) մեծարժեք ուսումնասիրությունը, որը մինչ օրս համարվում է այս լեզվին նվիրված ամենահիմնարար ու կարեւոր գործը:

¹ A. Chodzko, Specimens of the popular poetry of Persia, London, 1842, p. 506-510, 556-567.

Թալիշերենի Անբարանի բարբառը, որը խոսվում է Իրանի Իսլամական Հանրապետության Արդաբիլ նահանգի Նամին վարչաշրջանում՝ Անբարան շրջանի համանուն քաղաքում եւ շրջակա մի քանի գյուղերում՝ Ամինջանում, Անբարան-ե Օլյայում, Մինաբադում, Ջեյդում, Քալաշում, Միրզանաղում եւ այլն, մտնում է Հյուսիսթալիշական բարբառախմբի մեջ՝ այսպիսով, փաստորեն, լինելով Հյուսիսային թալիշերենի ամենահարավային բարբառը եւ սահմանակցելով կենտրոնական բարբառներին հետ:

Թալիշերենի Անբարանի բարբառում խոսքի մասերի համակարգում բայն աչքի է ընկնում իր քերականական կարգերի եւ ձեւերի հարստությամբ ու բազմազանությամբ. այն ունի եղանակի, ժամանակի, դեմքի, թվի եւ բայասեռի կարգեր: Այս բարբառի բայական համակարգում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում սահմանական եղանակի ներկա ժամանակաձեւը, որի կազմությամբ Անբարանի բարբառը առանձնանում է ինչպես թալիշական, այդ թվում՝ Ադրբեջանական Հանրապետության տարածքում խոսվող եւ նույն Հյուսիսային բարբառախմբի մեջ մտնող բարբառներից ու խոսվածքներից, այնպես էլ իրանական լեզուների մեծ մասից: Այսպես, այս ժամանակաձեւում արտահայտվում է Անբարանի բարբառի եւ ադրբեջանաբնակ թալիշների լեզվի բայական համակարգերի միջեւ առկա կարեւորագույն տարբերություններից մեկը: Թալիշերենի Անբարանի բարբառում սահմանական եղանակի ներկա ժամանակաձեւը կազմվում է միահիմք² բայերի միասնական կամ երկհիմք բայերի ներկայի հիմքից, -na- միջածանցից եւ դիմային վերջավորություններից, որոնց դերում հանդես են գալիս բայ-հանգույցի³ ձայնավորահանգ բառերին կցվող ձեւերը՝

² Իրանական լեզուներին հատուկ երկհիմք (ներկայի հիմք/անցյալի հիմք) բայական խոնարհման համակարգը թալիշերենի Անբարանի բարբառում (եւ ընդհանրապես թալիշերենում, ինչպես նաեւ այս տեսանկյունից թալիշերենի հետ զգալի ընդհանրություններ դրսևորող նոր ազադիական բարբառների հյուսիսային խմբում) խիստ խախտված է. բայերի մեծ մասը պատմական զարգացման ընթացքում կորցրել է հիմքերից մեկը, եւ այսօր էլ երկհիմք բայական խոնարհման համակարգից միահիմք համակարգի անցման գործընթացը իստենսիվ կերպով շարունակվում է:

³ Թալիշերենի Անբարանի բարբառում բայ-հանգույցը, ի տարբերություն ժամանակակից պարսկերենի, ունի միայն կցական ձևեր, որոնք միանում են անվանական բաղադրյալ ստորոգյալի անվանական մասին:

Դեմք	Եզակի թիվ	Հոգնակի թիվ
1	-m «եմ»	-mun «ենք»
2	-š «ես»	-n «եք»
3	-y «է»	-n «են»

Օրինակ՝ *āz ka-na-m* «ես անում եմ», *tə hət-na-š* «դու քնում ես», *ama omi-na-mun* «մենք գալիս ենք» եւ այլն: Ի տարբերություն Անբարանի բարբառի՝ Ադրբեջանական Հանրապետության տարածքի թալիշական բարբառներում ու խոսվածքներում բայահիմքի փոխարեն ներկա ժամանակաձեւի կազմության մեջ հանդես է գալիս անորոշ դերբայը, որին կցվում է *-da-* միջածանցը, ապա՝ դիմային վերջավորությունները⁴, որոնք նույնն են, ինչ Անբարանի բարբառում: Չնայած զգալի տարբերություններին՝ երկու բարբառներում այս ժամանակաձեւի կազմությունների միջեւ կարեւոր ընդհանրությունն այն է, որ թե՛ *-da*⁵, թե՛ *-na-* միջածանցները առաջացել են *a(n)da* ներգոյական հոլովի իմաստ արտահայտող ետադրությունից: Հենց այս միջածանցի՝ սահմանական եղանակի ներկա ժամանակաձեւում կիրառությունը էլ Հյուսիսային թալիշերենը առանձնանում է գրեթե բոլոր իրանական լեզուներից, որոնց հատուկ չէ նման կազմությունը. ժամանակակից պարսկերենում այս ժամանակաձեւը կազմվում է *mi-* նախամասնիկից, բայի ներկայի հիմքից եւ դիմային վերջավորություններից:

Իրանական լեզուների համար նման խորթ կազմության գոյությունն, ըստ Բ. Միլլերի, կարող է պայմանավորված լինել թյուրքական ազդեցությամբ⁶: Այնուամենայնիվ, այս տեսակետը ավելի համոզիչ հիմնավորման կարիք է զգում, քանի որ նման կազմությունը եզակի երեւույթ չէ եւ առկա է տարածաշրջանի այլ լեզուներում եւս: Այսպես, ժամանակակից հայերենում սահմանական եղանակի ներկա ժամանակաձեւը կազմվում է *-ում* վերջավորությամբ, որն ըստ Հր. Աճառյանի եւ Մ. Ասատրյանի՝ հենց ներգոյական հոլովի *-ում* վերջավորությունն է⁷, այսինքն՝ թալիշերենի Անբարանի բարբառը եւ ժամանակակից հայերենը սահմանական եղանակի ներկա ժամանակաձեւի կազմության հարցում դրսեւորում են գրեթե միանման հատկանիշներ, եւ բացառված

⁴ Б. Миллер, Талышский язык, Москва, 1953, с. 144-146.

⁵ Նույն տեղում, էջ 144:

⁶ Նույն տեղում, էջ 146:

⁷ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, գ. Բ, Երևան, 1961, էջ 175. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Երևան, 1989, էջ 258:

չէ, որ թալիշական կազմութիւնը լինի ոչ թե թյուրքական, այլ հայկական ազդեցութեան արդիւնք: Դեռեւս շատ ավելի խորը եւ համակողմանի ուսումնասիրութեան կարիք ունեցող այս վարկածի հնարավոր լինելը կարելի է ապացուցել թալիշերենի Անբարանի բարբառի բառապաշարում առկա թեկուզ փոքր հայկական հետքով, որի վառ օրինակ է «սալոր» հասկացութիւնն արտահայտելու համար այս բարբառում կիրառվող *dambul* բառը, որը բնիկ հայերեն բառ է⁸, այն վկայված չէ թալիշերենի հետ սահմանակցող ո՛չ թյուրքական, ո՛չ իրանական լեզուներում, հետեւաբար թալիշերենում կարող է լինել անմիջական փոխառութիւն հայերենից:

РЕЗЮМЕ

Статья посвящена анализу образования настоящего времени изъявительного наклонения в анбаранском диалекте талышского языка в сравнении с талышскими диалектами Азербайджанской Республики и армянским языком. В анбаранском диалекте настоящее время изъявительного наклонения образуется от единой основы одноосновных глаголов или от презентной основы двухосновных глаголов, с помощью интерфикса -na- и личных окончаний. По мнению Б. Миллера такое образование может быть результатом влияния тюркских языков, однако типологически таким же образом образуется и настоящее время в современном армянском языке, что позволяет выдвигать гипотезу о возможности влияния армянского на талышский, тем более, что следы армянского влияния прослеживаются также в лексике анбаранского диалекта талышского языка.

SUMMARY

This article analyzes the formation of the present indicative tense in Anbaran dialect of the Talyshi language in comparison with the Talyshi dialects spoken in the Republic of Azerbaijan and the modern Armenian language. In Anbaran dialect the present indicative is formed by the stem of the verb (either the universal stem for the verbs with one stem or the present stem for the verbs having two stems) adding the interfix -na- and the personal endings. B. Miller supposes that this way of the formation can be the result of the Turkic influence. It must be noted that the present indicative tense is formed almost in the same typological way in the modern Armenian and one can assume that the Armenian language also could affect the Talyshi language since we find the traces of such an influence in the lexicon of Anbaran dialect as well.

⁸ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1926, էջ 618. H. Martirosyan, Etymological dictionary of the Armenian inherited lexicon, Leiden, 2009, p. 167: